



ԽԱՂԱՐԱԹ-ԵՐԹ

ԽՄԲԱԳՐԱՊԵՏՆ Է՝ ԸՆԿԵՐ ԿԻԿՕ (Գր. Թորոսյան)
ԽՄԲԱԳՐԱՐՆԵՐ՝ ԵՍ, ԳՈՒՆ, ԱՆ, ՄԵՆԵ, ԳՈՒՐ, ԱՆՈՒՐ,
ՀԱՄԱԿՐՈՂՆԵՐ՝ ԱՐԵՍԱՐՈՒՆԻ ՍՐՈՍԱԶԱՆ, Յ. ՍԼՓԻԱՐ,
Վ. ԱՐԶՈՒՅԱՆ, Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ
(Փոփոխելի)

ՏԱՍՆԱԲԱՆԵԱՅ

Ես եմ «Ծաղիկ» եւ ինձ գտա «Ծաղիկ» չափի նանգնաւ:
Իմ անունս պարապ չեղ զարմանալ յ ինձ ինչ ալ տեսնէ:
Իմ փառաւ կանխիկ պիտի դրկէ:
Ամէն մարդ պէտք է յարգէ եւ զլիսուն վրայ նստեցնէ զիս:
Ո՛չ ոք պէտք է աչքը նետէ իմ փառայիս, քո՛ղ աչք ունեցողին աօքը
կլլայ:
Պէտք չէ իմ փառաւ ձեռ կոկորդը՝ անցընէ:
Պէտք չէ նեղանալ, երբ ձեռ դրկած յոյուածները չհասնին:
Պէտք է ձայն անգամ չհանէ՛ք եւ զլիսուն վրայ պնէ՛ք, երբ՝ ձեզի
դէմ գրուի այս սխալակեհուն մեջ:
Երբ զայս բարկանաւ, պէտք չէ մեղանշէ:
Եւ երբ մեղանշելու մօտ ըլլաւ, պէտք է... քաջութիւն խմէ:
Եւ երբ քաջութիւն խմէ, պէտք է... քաջութիւն խմէ:

Տնօրէն Ռ. Սաքաեան Ամեն տեսակ գրութիւն պէտք է ուղղուի Տնօրէնութեան

Հասցէ՝ Ղալաթիա, Գուրչունլու խառն թիւ 7

ԵՐԵՎԱՆԻ 18 ՄԱՐՏ 1909 ۞ درعلاء درعلاء قورشولی خاندە نومرو ۷

ԻԹԹԻՃԱՏԱԿԱՆ ԲՈՆԱՊԵՏՈՒԹԻՒՆ... ՓՈԽԱՆ ՀԱՄԻՏԱԿԱՆԻ

Այսօր իմ երեսուն երկու տարի
տապիւնէ, աճող իմ կեանքս, Արիկ
Մուսախանեանի հասակէն, մեծ
Պահքն ու երեսուցէի խնդիրն
ալ երկար տարին տար անոր բեր-
նին հոտը մօտիկ ըրէ, խնկարկուծիւն
ըրէ երկուան ջեօքն իմ որ այսօր
փառաւ կամ վէճիր է եղեր. գրպա-
նիդ մէկ անկիւնը տառնոց մը փնտ-
ռէ ու հազիւ գտիր, երբ անդին
նետիւնկներ, հեմիճուխներ, որոնք
խաւթամպօղէն եկած են ու տարի-
ներով լեպլեպլի ծախած են, անձնա-
կան կառքով կ'անցնին, տալատ
են Սուլթանին ու պանքնօթներու
դէպեր ունին գրպաններն:

Ամբողջ տարիներ, տառնեակներ
ըով տարիներ երկիրը հասցողին
վերջապէս սա ծաղկեալ վիճակին? Եւ
այսօր շնորհիւ Սուլթանին, ինչպէս
կը տեսնէք — կայր մարդոց հետ
գործ չունինք — յառաջդիմած է եր-
կիրը եւ չեմ գիտեր թէ ինչերնիս
պակաս կը գտնէք:
Ո՛ր կողմերնիս պակաս է...
Ընդհակառակը պակաս չըլլալէն
զատ իրեն աւելորդ մեծ քիթ մըն
ալ ունինք... որ խօսքով չի գտնուիր
ուրիշ երկիրներու մէջ:
Եւ որ մըն ալ, որուն անունը
Յուլիս 11 դրած են, եկան ըսին որ
ազատութիւնը եկաւ:
Բարի եկաւ, հազար բարի, բայց
եկու տես որ սխալ է եղեր բոլորո-
վին եւ ազատութիւնը ըստածը բուն
իրական ազատութիւնը չէ որ եկած
է Թուրքիա:
Ուստի նա...
Իրական, ճշմարիտ ազատութիւ-
նը աւելի կարեւոր գործեր ունենա-
լուն. իրեն տեղ կեղծը զրկած է որ
թէ եւ իրեն կը նմանի, բայց կեղծ է
վերջապէս:
Ու կըլեցինք, նոյն իսկ առանց
կառկառայի կու տուինք կեղծը՝ ի-
րականին տեղ:

Ներսէս կեղծերուն հրապարակի վրայ
վիտալէն եւ մէծիտիէներուն կեղ-
ծը շինուելէն ետք... չունշանորդի-
ններ՝ ազատութեան ալ կեղծը պիտի
չին են:
Ո՛րի՛ն ատ էր պակաս:
Եւ արդէն ըստ օրինի, չըլլալէք,
անհաւատալի բան մըն էր որ ապ-
րանքի մը աղէկ տեսակը գար Պոլիս
եւ այնքան շատ քնուէր:
Որովհետեւ հին բէթիմի օրով
Գերմանական ապրանքները կը քըշ-
ուէին՝ սա գերագոյն պատճա-
ռով որ... կեղծ էին:
Գերմանական կիները փառաւ կ'ը-
նէին հոս, որովհետեւ... աղէկ տեսա-
կէն կեղծ սէր կը ծախէին:
Վերջապէս Օրմանեանն ալ հա-
ւատքին, ազգասիրութեան, գթա-
սրտութեան, համակրութեան եւ...
ֆրանսական ոսկիներուն կեղծը կը
քըշէր ընդհանրապէս:
Կեղծիքի դարն էր եւ բնական է
որ Աստուած իսկ պիտի սրտմտէր
եթէ իրա՛ւ, իրա՛ւ, շախմատի համար
իրական ազատութիւնը ելլէր հոս
գար...
Անկարելի բան:
Մեր թուրք ազգայնամու բարե-
կամները ատանկ բաներու եւ մանա-
ւանդ ազատութեան պէս սախամեք-
լի, խաղաղ բաներուն իրականը եր-
բէք չեն սիրեր:
Որովհետեւ սատանան գործ չու-
նի. հապա՛ եթէ բուն իսկ ճշմարիտ
ազատութիւնը գայ եւ մնայ նե՛...
եւ ամէնէն գէշը պէտք եղած ատենը
դուրս եթէ չեկէ՛...
Մեղք չէ՛ Թուրքիոյ... որ իր
շնորհները հաւասարապէս քրիստոն-
եաներուն ալ բաժնէ եւ ինչո՞ւ:
Որո՞ն է Թուրքիան:

Արդեօք քրիստոնեաներուն պօր-
տին վրայ կտրած են՝ Ով են քրիս-
տոնեաները, ո՞րքն են եկած են եւ ո՞ր
երթալ կ'ուզեն:
Եւ այդ միամիտ քրիստոնեաները
ու մանաւանդ Հայերը, կարծեցին որ
այլեւս սիւստ իլիմանլըս եղաւ ամէն
կողմ:
Կարծեցին որ չորս «կեցցէ» ուլ երեք
«եալաքն» ուլ, ուլ թը համարյով
լմնցաւ ամէն բան:
Կարծեցին որ Ահմէտ Րիզա Պոլիս
հասածին պէս կռիւի պիտի սկսէր
Երլորդի հետ:
Կարծեցին որ Օսմ. Բօմիդէն
բուն իրական ճշմարիտ գօմիդէն է
այն գօմիդէն որ իր անձը հայրե-
նիքին համար կը գոչէ:
Կարծեցին որ ՅՅ տարուան քիթ
մը մէկէն ի մէկ եւ ուլ թը ամսը-
ուան մէջ... կոտորեցաւ:
Կարծեցին որ Մէսուտիէն Երլորդ-
զի առջեւ կենալով հեմէն զայն ուրմ-
բակոծեց:
Կարծեցին որ Հայ եկեղեցիին մէջ
թուրք ապայ մը երեք ճառ խօսելով
եւ երկու հայ կնոջ... զըզգարտալըմ
ըսելով հայերուն Հայաստանը տրուե-
ցաւ:
Ու դեռ, ինչե՛ր ինչե՛ր կարծեցին.
Բայց բանն ասանկ չէ եղեր...
Տակերնուս կ'երթայ... խաղաղ
չունինք եղեր:
Ո՛վ որի սակայն:
Որո՛ւ հոգ
Յուլիս 11ը անցաւ. հիմայ մարա
15 է եւ անկէ ի վեր կա՛մուրջին տա-
կէն շատ ջուրեր անցան... Անկէ
ի վեր երեք վարչապետ փոխուեցաւ
եւ մանաւանդ անկէ ի վեր քօմիդէն
իր գոյնը դուրս տուաւ:
Բօմիդէն՝...
Ազատութեան կեղծը կ'ըլլայ եւ
քօմիդէն կեղծը չըլլա՛ր...
Ինչպէս չէ. մարդիկը բնականին յար
եւ նման լաւադոյն դերասաններու
պէս կատարեցին եւ կը կատարեն քօ-
միդէնի դերը Թուրքիոյ բեմին վրայ:
Գլխաւոր դերը սակայն տուեր են իմ
քիթ օլաճալիսիս, որ սահմանադրական
վեհայետի մը պէս կը խաղայ եւ մեծ
յաջողութեամբ, ա՛յնքան յաջողու-
թեամբ որ կարծես թէ՛ երկար
տարիներ գօնաճեղմութեամբ մէջ ու-
սումնասիրած է այդ դերը:
Բօմիդէն՝... հերոս, փրկիչ...
Ո՛հ, ո՛հ, ո՛հ. ո՛րչափ ալ աղտո-
տեցան այս բառերը ո՛րչափ ալ փիս-
ցան:
Ահմէտ Րիզա Բարիդ Մեղվերեք
հրատարակելով, Ֆաուսիլայի փիազ
եփելով, եւ Սուլթան Համիտին դէմ
գրելով, այսօր քանի մը հարիւր

ոսկինոց պաշտօն մը եւ մեծ պալատ
մը ձեռք ձգեց:
Հայիւի մարդը տեսա՞ք...
Կեցցէ՛ պե՛... ինձմէ տիպ մը
Ահմէտ Րիզային, այդ յեղափոխա-
կանութեան... մեծ վաճառականին,
որ գիտցաւ մարդու մը դէմ նախ
հայնոյել եւ յետոյ անոր երեսները
համարել՝ բնականաբար քիթէն
սկսելով:
Ահմէտ Րիզան ալ հետեւաբար
մեծ Ֆաուսիլի, հռչակաւոր հերոս եւ
անձնուրաց հայրենասէր մըն է ճիշդ իր
ընկերներուն պէս, որոնք կը կոչուին
իթիմատականներ:
Յառաջդիմութեան եւ միութեան
քօմիդէ:
Յառաջդիմութիւն... ետ եր-
թալով եւ միութիւն... բոլոր Ազ-
գերը սալմանի տակէ իրարու դէմ
հանելով:
Յառաջդիմութեան Բօմիդէ...
պալալօ...
Եթէ յառաջդիմութեան քօմիդէն
ա՛ն է, չեմ գիտեր թէ յետադիմութե-
ան քօմիդէն որն է: Սուլթանին
կամարիլեան անոնցմէ աղէկ է:
Դոնէ մարդոց գոյնին սեւ ըլլալը որո-
շապէս յայտնի էր:
Համարական բռնապետութիւնը
իրը թէ տապալել են:
Ամմ'ան Էֆենտիմ, ինչ գաղմեք...
թո՛ղ երթար միար. գոնէ այսօր
փոխանակ հարիւրաւոր հոգիներու,
մէկ հոգիի մը ելլալուն կ'ընէք:
Չէ՛ որ էյվալլահ միշտ էյվալլահ
է:
Չէ՛ որ Հայը երբեք... հաւասար
չը կրնար ըլլալ եղեր... Իսլամին
իրը թէ՛ Իսլամը Աստուծոյ քեյ-
զիին տղուն թուր եղած ըլլար...
Չէ՛ որ... դեռ Հայը ջարդել
կ'ուզեն մանաւանդ Յուլիս 11 էն
վերջը... ձեռքերնին այդ շահաբեր
արհեստին վարժուած ըլլալով:
Չէ՛ որ... տասը Հայ խորհրդարանէն
ներս առնելու հաճեցան. Աստուածա-
յին շնորհ... եւ այդ տասը հոգիին
քանի մը հատը... պապէն աւելի
պապական կամ... պապական են:
Չէ՛ որ... առաջ միայն փոխին ու
խափին մեղի կ'սպառնային, մինչդեռ
հիմա երկու տարեկան թուրք տղեկէն
սկսեալ մինչեւ... Հիւմի փաշա
կ'սպառնան:

Կարծեցին որ չորս «կեցցէ» ուլ երեք
«եալաքն» ուլ, ուլ թը համարյով
լմնցաւ ամէն բան:
Կարծեցին որ Ահմէտ Րիզա Պոլիս
հասածին պէս կռիւի պիտի սկսէր
Երլորդի հետ:
Կարծեցին որ Օսմ. Բօմիդէն
բուն իրական ճշմարիտ գօմիդէն է
այն գօմիդէն որ իր անձը հայրե-
նիքին համար կը գոչէ:
Կարծեցին որ ՅՅ տարուան քիթ
մը մէկէն ի մէկ եւ ուլ թը ամսը-
ուան մէջ... կոտորեցաւ:
Կարծեցին որ Մէսուտիէն Երլորդ-
զի առջեւ կենալով հեմէն զայն ուրմ-
բակոծեց:
Կարծեցին որ Հայ եկեղեցիին մէջ
թուրք ապայ մը երեք ճառ խօսելով
եւ երկու հայ կնոջ... զըզգարտալըմ
ըսելով հայերուն Հայաստանը տրուե-
ցաւ:
Ու դեռ, ինչե՛ր ինչե՛ր կարծեցին.
Բայց բանն ասանկ չէ եղեր...
Տակերնուս կ'երթայ... խաղաղ
չունինք եղեր:
Ո՛վ որի սակայն:
Որո՛ւ հոգ
Յուլիս 11ը անցաւ. հիմայ մարա
15 է եւ անկէ ի վեր կա՛մուրջին տա-
կէն շատ ջուրեր անցան... Անկէ
ի վեր երեք վարչապետ փոխուեցաւ
եւ մանաւանդ անկէ ի վեր քօմիդէն
իր գոյնը դուրս տուաւ:
Բօմիդէն՝...
Ազատութեան կեղծը կ'ըլլայ եւ
քօմիդէն կեղծը չըլլա՛ր...
Ինչպէս չէ. մարդիկը բնականին յար
եւ նման լաւադոյն դերասաններու
պէս կատարեցին եւ կը կատարեն քօ-
միդէնի դերը Թուրքիոյ բեմին վրայ:
Գլխաւոր դերը սակայն տուեր են իմ
քիթ օլաճալիսիս, որ սահմանադրական
վեհայետի մը պէս կը խաղայ եւ մեծ
յաջողութեամբ, ա՛յնքան յաջողու-
թեամբ որ կարծես թէ՛ երկար
տարիներ գօնաճեղմութեամբ մէջ ու-
սումնասիրած է այդ դերը:
Բօմիդէն՝... հերոս, փրկիչ...
Ո՛հ, ո՛հ, ո՛հ. ո՛րչափ ալ աղտո-
տեցան այս բառերը ո՛րչափ ալ փիս-
ցան:
Ահմէտ Րիզա Բարիդ Մեղվերեք
հրատարակելով, Ֆաուսիլայի փիազ
եփելով, եւ Սուլթան Համիտին դէմ
գրելով, այսօր քանի մը հարիւր

25^ր որ... Ժողովուրդին դէմ զը
բահաւոր պիտի հանուէր եւ սուրհանդէս
կը քաշուին ու զինուորները տիպ-
ճեկներով մարդ կը ծեծեն:

25^ր որ... Դարձեալ քաղվիմը
վեգայի մը... ասայիչ պէր քեմալ
տըր կը նուագէ:

25^ր որ... Հիւսէին շահիտի մը
ձեռքը մնացած է ներկայ թուրքիան:

25^ր որ... Տօքթ. Տաղաւարեան
անուն մարդուկ մը, որ Եգեպտոսի
մէջ ամէն օր կ'ըսէ եզեր թէ՛ եր-
թանք Սուլթանին ոտքը իյնանք,
այսօր այդ մարդը 50 ոսկի ամսական
կ'առնէ 50000 Հայերու կողմէ խոր-
հըրդարանին մէջ նստած... Սեբաս-
տացիներու միամտութեան վրայ կը
ծիծաղի:

25^ր որ... Սապահեդդինի պէս
թուրք մը Բարլամէնթէն դուրս կը
ձգուի եւ Բրինձճիզատէի, Մուսթա-
ֆայի եւ Նէմիզատէի պէս Հայ ջար-
դողներ ներս կ'առնուին:

25^ր որ... Անմէտ Ռիզա ազգա-
սիրաբար, կը խզէ բոլոր այն ձայ-
ները որոնք կը բարձրանան խոր-
հըրդարանին մէջ... հայերուն ի նը-
պաստ:

25^ր որ... Բեհմիլ փաշան... ձգե-
ցին և տեղը Հիւսի փաշա մը բերին:

25^ր որ... Երևոյզ ճաշի գացին
և կուշտ ու կուռ կերան այն հացը,
որ Անատոլիոյ սովեակներուն բերնէն
խլուած էր:

25^ր որ... Կառավարութեան մէջ
կառավարութիւն մը ստեղծեցին:

25^ր որ... Բարիզի Բօնկրէին մէջ
Բօմիդէն իր տուած բոլոր խոստում-
ները ուրացաւ...

25^ր որ... Դաշնակցականներ սկսան
ձերբակալել տալ գաւառներու մէջ:

25^ր որ... Իտալիա 10,000 ոսկի
դրկեցին — իբր թէ անոնք թուրքիոյ
նպաստին պէտք ունենային — և 10
փարայ իսկ չը դրկեցին Հայաստանի
անօթիներուն, որոնք կը մեռնին:

25^ր որ... Բօմիդէին մէջ առին
մարդիկ որոնք, զԺողովէն իսկ վա-
նուած են գուցէ...

25^ր որ... Երէկ և այսօր, Յուլիս
10 եւ 11, նոյն բաներն են այսօր
երբ ութը ամիս անցած է...

Ինչ ունէր Համիտական բռնա-
պետութիւնը... որ տապալեցիք:

Համիտական բռնապետութիւնը
արդեօք միայն ձեզի՞ համար տապա-
լեցիք:

Այն ատեն, ներողութիւն...
Հազար ներողութիւն:

Որովհետեւ մենք, ապուշներս
ամենայն եմալիութեամբ կը կար-
ծէինք կոր որ այլեւս բռնապետու-
թիւն չկայ...

Ո՛վ կ'ըսէ. համիտականը գնաց
որպէսզի անոր տեղը գայ... Թիթի-
հատականը...

Թիթին մէկը կոտորեցիք որպէսզի
նոր քիթ մը անկէք մեր առջեւ...

Բայց խնդրեմ այս ըսածներէս
երբէք չցաւիք:

Ասոնք Յանքիզիներ են լոկ խնդա-
լու համար գրուած բաներ:

Չեղաք սխալիք եւ վրանդ
առնէք, արդէն հիմա վրանդ ա-
հաղին բեռ մը առած էք և ատիկա
կը բաւէ:

Այս ճամբան, բռնապետութեան
ճամբան, ազնոր ճամբայ է և երբէք մի
կասկածիք որ այդ ճամբով ձեր բո-
լոր քրտնաջան... հերոսութիւններուն
ուխտով վերական քարոզներուն հոր-
րիյեթական ճառերուն և միւսա-
վաքական բանաստեղծութիւններուն
պտուղի պիտի վայէք՝ թուրքիան
մարդ ընելով:

Դուք չա՛տ մարդ եղած էք...
Կարգը թուրքիոյ եկած է և ինչպիսի
ան ալ սայէի իբրինատիյէ, մարդ
կ'ըլլայ:

Եթէ այս անգամ ալ թուրքիա
մարդ չըլլայ, այն ատեն ըսել է...
մարդ ըլլալիք չունի:

ԸՆԿԵՐ ԿԻՆՈ

ԳԱՆՐ ՕԼՍՈՒՆ

ՄԵՐՊԵՍԹԻՆ ՄԱԹՊՈՒԱԹ

ՔԵԶԻ ԵՄ Ո՛Վ ԽԱՍԹԱՄՈՒՆԻ
ԵՐԵՍՓՈՒՍԱՆ

Գանր օլտուն, անանկ չէ՞...
Եաշա՛ պէ...

Ո՛ւր ես... արդեօք չարաթ օր ինք-
զինքդ մէկէն ի մէկ խաթմամօ՛ւ
կարծեցիր:

Շատ կը սխալիս Գ. խաթմամ-
պօլցի:

Ո՛վ ըսաւ քեզի որ այդ խորհը-
ղարանը չինուած է քեզի պէս մար-
դուկներու համար:

Երբ դուն իբրեւ ճշմարիտ խա-
թմամպօլցի պէտք էիր հեղիւ և քա-
հին հեղիւսը ծախել, չենք գիտեր թէ
սատանային ո՛ր գորութիւնովը եկար
և այդ տեղը նստար: «Անկցի մա-
մուլի ազատութիւնը» կը պօռաս հէ՛:

Արդեօք ինքզինքդ մէկէն ի մէկ
Երևոյզ կարծեցիր թէ՛ Սուլթան Հա-
միտի՝ ձեզի պէս ցաւագարներու
տուած սեղանին վրայ:

Բայց յանցանքը քու քովդ չէ,
ո՛վ հեղիւսը խաթմամպօլցի, յան-
ցանքը քեզի ընտրողներուն է, որոնք
գացեր եկեր և քեզի մարդու տեղ
դրեր են...

Դուն արտաքին երեւոյթով մար-
դու կը նմանիս եղեր. բայց ներ-
քինդ տարբեր է եղեր բոլորովին:

Գանր օլտուն հէ՛...

Դուն ո՛վ կ'ըլլաս, խեղճ հէրիֆ,
որ հասկնաս թէ ինչ ըսել է Մամու-
լի ազատութիւն:

Բայց եթէ գիտնայիր արդէն...
խաթմամպօլ չէիր ծներ...

Իբր թէ խորհրդարանին և անոր
Մեղվեթեքայատիւ նախագահին ը-
րածը չէր բաւեր... հին րէժիմին ի
նպաստ, դուն ալ եկար և ամբողջա-
ցուցիր:

Արդէն՝ խեղճ իլի պոքրուն-
տեղ պիլի պիլիքստեմ ուղարկուց...

Եւ ձեր խորհրդարանն ու իր նա-
խագահը իրար աղէկ գտեր էք...

Թեհմիթ Եոպարլամնը գաբա-
ղընը պոքրունը:

Արդէն Անմէտ Ռիզա եթէ մարդ
ըլլար, Մեղվեթեքին մէջ չէր հայհո-
յեր ու հիմա ալ Սուլթանին հետ չէր
սիրուողներ:

Ինչ կը սպասէ Աղդը արդէն ձեզ-
մէ...

Ես իմ մասին կը սպասեմ որ վա-
ղը խորհրդարանը գոցէք և բանալի-
ները տանիք յանձնէք ձեր վեհապե-
տին, որ ի փոխարէն կուտայ... ինչ
որ ուղէք:

Արդէն խորհրդարանը բաց պա-
հելով ինչ կ'ընէք:

25^ր որ խորհրդարանի անունին
տակ այդ չէնք... օսմ. Գոմիդէի
բոյնը ըրած էք:

25^ր որ իթթիհատականներուն դէմ
խօսողները կը լռեցնէք:

25^ր որ Անմէտ Ռիզայի պէս մարդ
մը, եթէ ձեռքէն գայ այսօր Պապէն
աւելի պապական եւ Սուլթան Հա-
միտէն աւելի Սուլթան Համիտ պի-
տի ըլլայ...

Մամուլի ազատութիւնը գործեր-
նուէ չեկա՛ւ:

Շատ բնական է, որովհետեւ ո՛վ
գիտէ ինչեր ունիք որոնք Օսմ. Բօ-
միդէն այդ սքանչելի յեղափոխական
մարմինը կը ծածկէ:

Արդէն ինչնր չի ծածկեց և չի
ծածկեր...

Եւ ինչո՞ւ չի ծածկէ երբ այդ
մեղքերը կը ծածկուին արդէն... ոս-
կիով:

Մարդիկը ձեպի տեղի կը պառ-
տէին և այսօր... կեր, արբ և ուրախ
լեր:

Այս խեղճ թուրքիան ճգնաժա-
մի մէջ է եղեր,

Այս խաթմամպօլ կուգայ եղեր:
Այս Անգլիան կը սրբողջենք
եղեր...

Որո՛ւ հոգ...

Ո՛վ որի...

25^ր որ Անմէտ Ռիզա ի պատուի
է, քանի մը հարիւր ոսկի ամսական
և ապարանքներ նուէր կ'առնէ, այլ
եւս Բարիզի պէս... ֆասուլեայ
չուտեր և աղջկանց դպրոց կը բա-
նայ...

25^ր որ Բօմիդէի բոլոր անդամ-
ները... պէյի պէս կ'ապրին...

25^ր որ խաթմամպօլցի հեղիւսն
ները իսկ 50 ոսկի ամսականով երես
... փոխող կ'ըլլան:

25^ր որ եթէ ուզեն կրնան խոր-
հըրդարանի Ահրար անդամները որ-
սորդ զինուորներու միջոցաւ հրացա-
նի բռնել... Զօհրապէն սկսելով:

Բայց թուրքիան կը կործանի ե-
ղեր...

Ա՛տ ալ մտածելիք բան է...

Այսօրուանը կե՛ր և վաղուանը
մի՛ մտածեր...

Խեղճ, խեղճ, խեղճ, երիցս
խեղճ թուրքիա՛, քիթ օլաճախ մը
քեզի մեղքուց և այս տեսակ խոր-
հըրդարան մը կարծեմ... դամբանա-
կանդ պիտի կարդայ:

ԿԻՆ—ԿՈ՛

ԿԱՐԴԱՑԷՔ

ՄԵՐ Դ. ԷԶԸ

«Կալվոսոյ»ի եւ «Ծաղիկ»ի սիրերիդը
սրամիտ եւ շահաւետ

ՊԱՏԵՐԱՅՄ... ԹԷ՝ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

ԹՈՒՐԿԻՈՅ... ՄԹՆՈՒՈՐՏԸ

«Ե՛նչ կ'անցնի կը դառնայ մը,
որ լրջօրէն գրուած է)

Թուրքիա այս միջոցին, յղի նոր
հարսի մը պէս ծանր ճգնաժամ մը
կ'անցընէ:

Գործերը վարդապետն ըլլալէ շատ
հեռու են և... ընդհակառակը սեւի
կը չալին:

Հորիզոնին վրայ ամպեր կան
կուտակուած...

Անձրեւ պիտի գայ մօտ օրէն և
թուրքիոյ բոլոր մեծ դիւանագէտ-
ները, բոլոր նախարարները, Դահ-
լիճը ամբողջ կը խօհի թէ՛ ինչպէս
առաջը պիտի առնէ այդ հսկայ
անձրեւին, որ կը վախճամ թէ պիտի
ողողէ ամբողջ թուրքիան:

Ու թուրքիա իր բանականները շարժ-
ման մէջ կը դնէ:

Ամէն օր դօրքերը Պոլսոյ փողոց-
ներուն մէջ քալիմ կ'ընեն:

Իրաց այս վիճակը շատ երկար
պիտի տեւէ...

Ասիկա կարելի չէ գուշակել.
թէ և մօտաւորապէս կրնանք ըսել
թէ՛ եթէ երկար ալ չտեւէ, կարճ կը
տեւէ. և եթէ կարճ չտեւէ, երկար
կը տեւէ:

Արդ այս բացորոշ պատասխանէն
վերջ կարելի է գաղափար մը յայտ-
նել Սերպիոյ, Պուկարիոյ, Դարա-
տաղի և Աւստրիոյ վրայ:

Ասոնց ամէնքն ալ աչքերնին մեր
վրայ դարձուցած են և կը փափա-
քին որ իրենք ալ՝ մեր պողաջայէն
կտոր մը ուտեն...

Արդ, օրուան մեծ հարցն է մեզի
համար, պողաջային խնդիրը:

Բայց խնդիր է թէ մեր հզօր
կառավարութիւնը այդ պողաջայն
ուրիշ պիտի կերցնէ...

Չկերցնելու համար ինչ պիտի
ընէ... պիտի դիմադրէ:

Հիմակուրէն Սամի փաշա գործի
վրայ է. մանաւանդ Կալաթա Սէ-
րայի ոստիկանութիւնը:

Անցեալ օր Բերայի մէջ Յոյն դի-
նով մը Կալաթա Սէրայ տանելու
համար վաթսուէն աւելի որիորդ
զինուոր զրկուել և մինչեւ իսկ զէնք
քաշելու ստիպուել են:

Մենք, իրիւ նշանաւոր քաղա-
քագէտ, չենք հաւատար որ գինով
մը Կալաթա Սէրայ տանելու համար
զրկուած ըլլայ այդ վաշտ մը դօրքը:
Ո՛չ...
Հաշա՛...

Այլ այս դօրքը զրկուած է որ-
պէսզի նախ ոտքերնին վարժուի և
յետոյ մօտակայ պատերազմի մը մի-
ջոցին նշանաւորութիւն սովորին և
թշնամին առջեւ շանճրկին:

Ահա՛ թէ ինչու կը հետեւցնենք
թէ... պատերազմ մը մօտալուտ է
թուրք զինուորներուն և մայրաքա-
ղաքի... բնակիչներուն միջեւ:

Մենք մեր կարծիքին վրայ կը
պնդենք:

ԲԻԻԶԱՆԴ ԲԷԶԱՆ
(Կեղծը)

ԹԵՐԹԵՐՈՒ ՍԱԿԱՐԱՆԸ

(ՁԵՌՆԱՍ ԱՆՁԻ ՄԸ ԿՈՂՄԵ ԳՐՈՒԱԾ)

Այսօրերս հրապարակին վրայ տենդատ գործունեություն մը կայ թերթերու, շաբաթաթերթերու, օրաթերթերու, արշալուսային թերթերու, վերջալուսային թերթերու, գիշերային թերթերու, ամսաթերթերու, կիսաշաբաթաթերթերու, որոնք 10 փարայէն՝ մինչեւ 100 փարայի կը ծախուին:

Վերջերս Անատոլէն եկած հեռագիրներու վրայ Պոլսոյ թերթերը բաւական մեծ անկում կրեցին սակարանին մէջ:

Շատ մը թերթեր թաւալելոր ինկան, ոմանք քանի մը բռնկում վրայ դրին և ոմանք ալ անագին բարձրացումներ ունեցան:

Թերթերու սակարանին գլխաւոր գործակատարը՝ Նազարէթ էֆ. Այսօրեան հետեւեալ հմտալից սակարանական յօդուածը գրած է:

1909 ՄԱՐՏ 14

Արեւելք. — Ապրանքը լաւ է, բայց կարգ մը գոմիսիօններ չեն ուզեր արտածել այդ ապրանքէն օտար երկիրներ: Այս ապրանքին աղէկութիւնը անկէ յայտնի է որ իր «Աղատ կարծիք» թերթէն շինած խաբաղանքներ մեծ սպառում կ'ունենան: 3000 վական հասաւ անցեալ օր այդ ապրանքէն և մեծագոյն մասը սպառեցաւ. առայժմ նոր խնդրանք չկայ:

Բրձագոյն. — Ո՛չ առնող կայ հոս, ո՛չ ծախող. թէ և չամիչներու երկրին մէջ բաւական սպառում ունի. իր գործարանին մեքենաները աւելուած ըլլալուն բոլոր ապրանքները երբ հոս կը հասնին. կարծես թէ՛ Մինկարուէն ճամբայ ելած են: Հարցընող փնտռող չկենալուն՝ վաճառականները անտարբեր են: Դինները վրայ չեն դներ, բայց անկում ալ չունին:

Անտաբեր. — Դրստոսի ժամանակին մնացած ու դեղնած ապրանք մը. կարծես թէ արեւ ի լոյս տեսած չէ երբեք. այդ թերթը ձեռք առնողին վրայ սարսուռ մը կուգայ: Ամառ օրերուն լաւ քուռող ապրանք մըն է՝ իրեն զովացուցիչ. շատ մը բողոքական... մտքով հիւանդներ ատոր ջուրը կը խմին և կ'առողջանան իրր թէ: Մէկ հատիկ դեղ է թիֆօյէ տառապողներուն որոնք եթէ անկէ հատ մը կապեն իրենց ճակտին յիսուն աստիճան տաքութիւն իսկ ունենան կը բժշկուին: Այս ապրանքէն սրօք շատ կայ Ամերիկացիի պիլիմով Հայ վաճառականներու քով: Անոնցմէ զատ մարդ փնտռող չկայ. հրապարակին վրայ երբեք չաղդեր այդ ապրանքին անկումը կամ բարձրացումը:

Բիւզանդիոն. — Տոկուն ապրանք մը. շատ կը փնտռուի մասնաւորաբար Պալք Բազարի վաճառականներուն կողմէ, որոնք օխաներով կը սպառեն այդ ապրանքէն. այդ ապրանքին գլխաւոր արտածիչ վաճառականն է ոսկերիչ մուպպեմաճի մը: Այս օրերս 600 վական դրկուեցաւ:

Բոլոր գոմիսիօններուն որոնք մեծ մասամբ ետ դարձուցին, որովհետեւ կը... հոտէր: Հրապարակը այս միջոցին երբեք գործ չկայ: Ո՛չ արտածում կայ և ո՛չ ալ ներածում: Թէեւ բուն գործարանատիրոջ զաւակները որոնք գլխաւոր բաժնետէրերն են այդ ապրանքին, ամէն կողմ կը պօռան կը կանչեն թէ իրենց գործարանին ապրանքը, այն միակ ապրանքն է որ չուկային մոնպանէաններու ցուցահանդէսին մէջ գնահատուած է և... ոսկի միտալի ու «Տիտան» վկայականի արժանացած:

Գարուն. — Ձմրան մէջ գարնան ապրանքները կը քուլին ա՛յնքան՝ որքան պաղ ջուրը կը քուլի դեկտեմբեր ամսուան մէջ: Երբեք գործ չկայ և մեռելական հանգարտութիւն մը կը տիրէ հրապարակին վրայ: Շատ մը վաճառականներ զատ բացին այդ ապրանքին տիրոջ դէմ որ թերթ հանելու տեղ հարկ է որ իշխան փալան չինէր:

Ժամանակ. — Դիններ բարձր են. միշտ դէպի վեր. ամէն օր ոգեւորութիւն կայ սակարանին մէջ: Վաճառականներ ապրանք գնելու համար իրարու գլուխ կը պատահեն: Առ այժմ առաջին կառախուժումը Պալք Ալիէն կամուրջին գլուխը հասաւ 500 վական ապրանք. այս ընկերութեան արսիօնը ունեցողները մեծ ուրախութեան մէջ են, որովհետեւ ամէն մէկ հակ գլուխ քսանական զրոյ. կը մնայ իրենց:

Ծաղիկ. — Այս ապրանքը բիւզա չունի. կը քուլի կոր, պապա՛մ:

Կալփօշ. — Բիւզա միացա չկայ. կ'երթայ կոր. պէ՛...:

Մանգուս. — Կը կարծուի որ դարձեալ ոգեւորութիւն պիտի սկսի. թէ և խնդրանք չկայ առայժմ. բայց յոյս կայ որ օգեքը քանի բացուին այնքան այս ապրանքին վրայ ալ գործ կ'արելի պիտի ըլլայ ընել: Հետզհետէ սակարանին մէջ գինները կը բարձրանան: Առ այժմ սրօք ապրանք շատ կայ, փախաբողներուն թէ՛ ծովու և թէ՛ ցամաքի ճամբով կը զրկուի դոյ անտուկներով:

ՆԱԶԱՐԷԹ ԱՅՃԵԱՆ,
(Կեղծը)

ԱՊՏԱԿՆԵՐ

ՁԱՐԿ, ԲԱՅՑ ՄՏԻԿ ԸՐԷ՝

★★★ Դասթէմուրի Երեսփոխանը փաշայութեան աստիճանին պիտի բարձրանայ ի վարձ «Անկիցի մամուլի ազատութիւն» պօռաքած ըլլալուն համար: Կեցցէ՛ Սահմանադրութիւն:

★★★ Սա՛ թաւիքը երթալով կը պաղգաւակնայ կոր: Այդ Հիւսէյին Ճահիտ ըսուածը մինակ... ըլլա-ցողութիւն ընելը գիտէ: Ինչո՞ւ Սուլթանին... աչքը մտնելու համար այդքան քիթը կը մտնէ կոր: Ո՛վ ըսաւ իրեն որ Սուլթան Համիտ իր ուղեւորով տուաւ Սահմանադրութիւնը: Ազգն ու բանակը ինչ ըրին ուրեմն: Բայց Հիւսէյին Ճահիտ չա՛տ չնոր-քով տղայ է եւ բնաւ... կաշառք չուտեր:

★★★ Աղլ. Ժողովին երթալով պօշաֆէներու կեդրոնավայր կը

դառնայ: Գէորգ եպիս.ը երեսփոխան չընելու համար անպատճառ ամբաստանելիք բան մը կը փնտռեն. իսկ անդին կարծես թէ կոյր են և չեն տեսներ Իզմիրեանը և Վեհապետեանը մատնողները, որոնք իբրեւ երեսփոխան Ժողովին մէջ նստելէն զատ, չեն ալ ամչնար և Գէորգ եպիս.ի դէմ կը խօսին: Իսկ ի՞նչ ըսել սա Հայկազուն Պէկեանին որ ուրբաթ օր իր բոլոր գոյնը դուրս տուաւ. ինք ո՛ւր էր երբ Երուսաղէմի խնդիրը կար. ա՛ս է իր անկողնակալութիւնը: Գիտէ՞ թէ ի՞նչ կ'ընէ կոր: Ի՞նչ կը նշանակէ փորը տնկած, ոտքը ոտքին վրայ նստիլ Երեսփ. Ժողովին մէջ և «Կէօջէ օղլուն ալ երեսփոխան ընենք» մուտալ: Ասիկա իբր պաշտպանողական չեմ ըսեր. այլ այդ Պէկեան պատուիրակին... անկողնակալութիւնը ցոյց տալ կ'ուզեմ: Անկողնակալութիւն մը որ... Արդեօք ինչո՞ւ Պէկեան որբաթի Ժողովին մէջ աչքով միշտ հաղորդակցութեան մէջ էր... Վահան Սուրենեանի հետ: Ինչու... ո՛հ ինչո՞ւ...:

★★★ «Ալխատանքի Տան» երրորդ Ժողովը գումարուեցաւ և դարձեալ ներկաները մեծ արդիւնքներ ցոյց տուին... ալխատանքի Տան: Ալխատանքի անդամ ը որ նախորդ նիստին Վարդգէսի բառերսին հագած և մեկնած էր. այս վերջին նիստին ալ Արշակ Պաթիթարի լաստիկները հագնելով կծկեց:

★★★ Բանի մը շաբաթէն Դաշնակցականներու «Աղատամարտ»ը պիտի սկսի հրատարակուիլ: Կը լսենք թէ՛ կարգ մը թերթեր սկսած են բռնկիլին Ժողովը:

★★★ Վաղը իրիկուն Վարիէթէ և ուղղակի Վարիէթէ գլխեցէ՛ք. Տիկ. Մայսուրեանի, այդ հրաշալի արուեստագէտուհին խումբը մեծ պատրաստութիւններով պիտի ներկայացնէ Ուրիել Ակսուտա անուն բիւսը: Այս ներկայացումին մէջ հրաշալի են պարզապէս Տիկ. Մայսուրեանը և Պ. Պ. Զարիֆեան եւ Յարութիւնեանը: Խումբը գովեստի պէտք չունի, ոչ ալ Տիկ. Մելիքեանն ու Զարիֆեանը որոնք այս առթիւ կայսրութեան Տուժարին որդուով բարձրացուցին մարքիզուհիի աստիճանն: Ընկեր կիկօի շնորհաւորութիւնները:

★★★ Արեւեան խումբը Մաղնիսայի մէջ ներկայացում տուած միջոցին, թատրոնը փլեր է և... սակայն անձի կորուստ չկայ եղեր: Անցած ըլլայ Ոսկանեան: Օր. Արուսեակ կրնայ անհող ըլլալ իր... նշանածի մասին:

★★★ Բիւզանդ. Գէզեան այլեւս ամէն տեղ է: Աղլ. Ժողովը բացուելէն ի վեր մէկ անգամ միայն եկող Գէզեան էֆ.ն, անցեալ նիստին բարապաններէն ալ կանուի Սորհրդաւարան դադարէր: Ի՞նչէն է արդեօք:

★★★ Երուսաղէմի միաբանները վերջին տնօրէն խորհուրդին մէջ, կ'ըսէ Մանգուս, յոտնկայս շնորհակալութեան քուէ տուեր են Հայկեակ եպիս. և ուրիշներու: Ձենք

գիտեր թէ՛ երբ շնորհակալութեան համար քուէները ոտքի վրայ կը տրուին, արդեօք պարտաւանքի քուէները... կռակի վրայ պիտի տրուին: Այս կէտը քիչ մը մոթ ըլլալուն կը խնդրուի քաղաքացի-տութենէն որ այս տեսակ մոթ կէտեր լուսաբանելու համար... քանի մը հատ օղային կաղի կտուցներ զետեղէ:

★★★ Հրապարակ ելած է եղեր «Այրած քնար մը Բիւզանդի մոխիր» ներուն վրայ: Նոյն չեմ գիտեր թէ երբ քնար մը այրած է, այլեւս ինչպէս Պ. Էսաճանեան, գրքին հեղինակը, կարող կ'ըլլայ կոր նուագել: Իսկ երկրորդ որ այդ գիրքը վեհմասն

և միաշունչ դիցադնիքութիւն մըն է եղեր ողբագին մուշնիներով օժտուած: Ինչպէս նաև Հզօրագոյն, նոր ու հոգեկիր թիւղերանուագ մըն է եղեր: Այս հոյակապ թիւղերանուագը դուրս է եղեր... վանականի մը բերանը: Ասոնք ամէնը մէկ կողմ, բայց չի կրցանք հասկնալ թէ այսքան հոյակապ բաները ինչո՞ւ վանականի մը բերանը... դուրս են: Ամէն պարագայի մէջ կարմէ որ այս «ողբագին մուշնիներով օժտած և «թիւղերանուագ հոյակապ» հատորէն ունենան Տօրթ. Պօղոսեանի (յիմարաներու բժիշկ) բոլոր յաճախորդները:

★★★ Դերձակ Միրիճանեան՝ Տիկին Մայսուրեանի խումբին եմբեկարիօն ըլլալէ ի վեր խաճա կը բռնէ կոր: Կը լսենք թէ իր էմբերիզարիութենէ Ժողոված փարաներով Միրիճանեան խանութ մը պիտի բանայ Բերայի շիտակը այս անունով — Դաշնակցական դերձակ, կը կային երեսփոխաններուն եւ դերասաններուն լաթերը:

★★★ Թուրքիա միշտ բարեկարգուելու ճամբուն մէջ է իբր թէ, բայց երբեք բարեկարգուած չունի: Հիմա դարձեալ գերմանական քաղաքականութեան սկսանք հետեւիլ: Իբր թէ՛ հին բէժիմի օրով շատ խնդ տեսանք անկէ: Արդէն Յէրիտ փաշայի պէս մարդը Իզմիրի Վաղը ընող կառավարութենէն ի՞նչ կը սպասեն և չէ՞ որ կրնան օր մըն ալ Վարչապետ ընել: Եւ այն օրը վստահ եղէք որ Թուրքիան ճիշդ... Թուրքիոյ պիտի նմանի:

★★★ Հայեակ Արամեանց ուրբաթի Աղլ. Ժողովին մէջ դարձեալ ճառեց «Զինեալ յեղափոխութիւն»էն և պըլք մը ըրաւ, իբր թէ՛ բոլոր կուսակցութիւնները միացած են: Բաւական ծախ իւլեց. բայց մեղք որ այդ ծախներուն վրայ Շահրիկեան պաղ, շատ պաղ ջուր մը թափեց: Խեղճ Արամեանց, ձմեռ օրով այդ տեսակ պանեօ քաղաքիք բան չէ:

★★★ Ժամանակ երէկ հետեւեալ քօնաձեւերը տուած էր. «Ծաղիկ-Կալ-նօշի այսօրուան և ամբողջ այս շաբաթուան թիւերը պիտի հրատարակուին արտաքոյ կարգի նոր ու հետաքրքրաշարժ նիւթերով»: Արդեօք մինչեւ հիմա ի՞նչպէս կը հրատարակուին Ծաղիկ-Կալնօշ: Բասիմ ճանձրութիւն յանձն առեր է այս ուղեւոր ընելով, որուն երբէ՛ք պէտք չունինք: Բայց... շնորհակալութիւն:

ՎԱՂԸ «ԿԱՎՈՐՇ»

ԱՐՏՕՆԱՏԷՐ Ա. ՍՍԴԱՆԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. ՍԱԳԱՆԱՆ

«ԾԱՂԻԿ»-«ԿԱՎՈՐՇ»-Ի ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
(«ԲՈՒՋԱՆԳԻՈՒՆ»-Ի ԶԱՓ ԴԻՍԿԱՆ)

Ծաղիկ եւ Կավոճ միասին, տարեկան, Պոլսոյ համար 80, վեցամսեայ՝ 45 դրու: Ծաղիկ կամ Կավոճ՝ առանձին՝ տարեկան 45 դրու:

Ծաղիկ եւ Կավոճ միասին, տարեկան, Դաւարի համար 100, վեցամսեայ՝ 60 դրու: Ծաղիկ կամ Կավոճ՝ առանձին՝ տարեկան 60, վեցամսեայ՝ 35 դրու:

Ծաղիկ եւ Կավոճ միասին, Արսասահմանի համար տարեկան 52 դր. վեցամսեայ՝ 43 դր.: Ծաղիկ կամ Կավոճ՝ առանձին՝ տարեկան 45, վեցամսեայ՝ 8 դրան:

Ոչ ոք զօրով բաժանողը կ'արձանագրուի:
Դրամը կանխիկ չղկողները եւ մեր փառան ու տողները կ'անիծենք եւ... կը խայտառակենք:

ՈՍԿԵՐԶԱՏՈՒՆ
«ՔՐԻՍԹՕՖԼ»

ՄԻ ՄԻԱՅՆ ՄԷԿ ՀԱՏԻԿ ՏԵՍԱԿ
ԱՄԵՆԱԼԱԻԱԳՈՅՆ
ԶԱՅՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ
ՊԱՀԱՆՁԵՑԷՔ

Այս մարման  եւ «ՔՐԻՍԹՕՖԼ» տնունը
Ամեն մէկ կտորին վրայ



ՎԱՅՆԵԶԱՍԵՐ ԿԻՆԵՐԸ
ՈՐՈՆՔ Կ՛ՈՒՁԵՆ ՊԱՀՊՆԵԼ

ԻՐԵՆՑ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

ՊԵՏԻ Է ԱՄԷՆ ՕՐ ԳՈՐԾԱԾԵՆ

ՃԵՄԱՐԻՑ
ՔՐԻՍ ՄԻՄՈՆԸ

ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԴԱԼ ՀԵՏԵՒԵԱԼ ՏՈՂԵՐԸ

ԿՆՈՁ ՄԸ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ կատարեալ չըլլար առանց գոյնի մաքրութեան Բոլոր այն տիկիները, որոնք հոգը ունին այս թանկագին ձիւքերը անկորուստ պահելու, պէտք է բացարձակապէս մերժեն գործածութիւնը այն ածանցագին արտադրութիւններուն որոնք չունենալից ունենան որով ծախու կը հանուին: Գործածուած նախնական նիւթերուն ստորին տեսակէ ըլլալն է որ ներքին կ'ընէ այդքան ածանց ծախել զանոնք: Այս պատճառաւ նուազ ըստորին տեսակները պատրաստուած են մեղրամոմով կամ օճառով, որոնք օգին մէջ կը չորնան, եւ միւս տեսակները, աւելի վտանգաւոր մորթին համար, կ'պարունակեն այն տեսակ ճարպեր որոնք կըծթան եւ քիչ ատենէն առաջ կը բերեն անդամանելի կարմրութիւններ եւ խորշոմներ:

Միայն ՔՐԻՍ ՄԻՄՈՆԸ հնարուած 1860ին, զուտ նշայի կշիւներով բազմաթիւ անգամ ո՛ր եւ է նիւթի, իրապէս առողջապահական արտադրութիւն մըն է: Բովանդակ աշխարհի մէջ բոլորվայելչապէս կ'ընեն ընդունուած է եւ նոյն իսկ իր անհուն յաջողութեան պատճառաւ է որ բազմաթիւ կեղծ նմանութիւններ երեւան կ'ելլեն ամէն օր: 1900ի տիեզերական Արուեստահանութիւնն մէջ արժանացած է Ոսկի Միտալի:

Ի հարկէ ՔՐԻՍ ՄԻՄՈՆԸ գինը աւելի բարձր է կեղծ պատրաստութիւններու գինէն եւ ասոր պատճառը իսկապէս իր նախնական նիւթերուն ազնիւ տեսակէ ըլլալն է, որովհետեւ բոլոր ծախողները կը խոստովանին թէ հակառակ անոր համեմատաբար բարձր գնոյն՝ նուազ կը չափն նմանօրինակ ուրիշ տեսակներու վրայ:

Բնաւ մի վարանիք ուրեմն պահանջել Կոստ Բրեւ Սիւնը միշտ լաւ ուղադրութիւն ընել: Վերի վաճառանշին եւ յաւէտ երկտաարդ թարմ պիտի մնաք մինչդեռ ձեր գրացուհիները, պիտի պառւանան՝ ցաւելով իրենց խնայասիրութեան համար:

ՄԵՐ ՍԻՐԲՐԻԶԸ

ՍՐԱՍԻՏ ԵՒ ՇԱՀԱՒՈՐ

★★★ ԵՐԵՎԱՆԻ ՍԱ ՄԻՋՈՑԻՆ ՄԵՐ ԷՆ ՄԵԾ ՄԱՐԿԸ ԵՒ ԵՐԸ ԷՆ ՊԵՏԻՆԸ ԵՒ ԵՆՁՈՒՄ: ★★★

Շաբար մը պայմանաժամ, է՛ն աղւոր, է՛ն կարճ եւ է՛ն սրաւիտ պատասխանը տուողը պիտի ստանայ իր տուգինաւ մը լուսանկարը. քարդ-բաղալի մեռով, երկրորդ մրցանակը շահողը՝ կես տուգինաւ: Պատասխանները կը հրատարակուին շաբար օրերը, իսկ հարցումները կ'ըլլան երկուշաբթի: Պատասխանները պետք է ղրկուին մինչ Կրքար օր:

Էռլընդու խանի կայսրութեան մասնաւոր եւ միակ լուսանկարիչն է

ՄԻՄՈՆ

414, Բերա, Շիսակ-Ճամբայ, 114

Ուրեմն, Տիկիներ, Օրիորդներ եւ Պարոններ միտքերիդ սրեցէք եւ պատասխանեցէք:

Մեր Ա. եւ Բ. մրցանակները շահողները, պիտի երբան հոն լուսանկարուելու:

Ամենէն սրամիտ պատասխան տուողին լուսանկարը պիտի հրատարակենք մեր բերրին մէջ:

ՀԱՃԻՍԱՐԻՄ

ՀԱՅ ՄԻԱԿ ՄԵԾ ՇԱԲԱՐԱՎԱՃԱՌ ԲԵՐԱ, ՄԵԾ-ՓՈՊՈՅ, ԹԱԳՈՒՄ

Ո՛վ Հայեր, չաքարի պէս Հայեր, ո՛րկէ պէտք է գնէք դուք ձեր չաքարները, հարսնիքի, նշանառքի, ընդունելութեան չաքարները, պօնպօնները, իքսիւնները, անուշիկները, կաթօնները, չոքոյաները, ո՛րկէ պէտք է գնէք այն ամէն բան որոնք ձերին համ կուտան:

ՀԱՃԻ ՍԱՐԻՄԷՆ

Ո՛վ Հայեր, իրիկունները ո՛ր պէտք է խմէք ձեր մէկ-երկու գաւաթ օղին, ո՛ր պէտք է խմէք ձեր գարնջուրը ընտիր մէղէներով:

Չաւական համով եւ ընտիր ջեօրիկներ Դիմեցէք Հաճի Սարիմ, գնեցէք Հաճի Սարիմն:

Հաճի Սարիմ, Հաճի Սարիմ Պօնպօններուդ ես կը մարիմ:

ՀԱՅ ԶԻՆԱՎԱՃԱՌ ՂԱԼԱԹԻՈՑ ԶԱՐԵՅ ՊԵՆՎԵԱՆ

Ուղղակի Ամերիկայէն բերել տուած եւ ամենաբարձր գէնքեր, վաճառող կանխիկ եւ ամսական վճարումներով:

Դիմեցէք Ղալաթիա, Գարախէօյի բաղնիքին կից քիւ 57 վանառանցք:

ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ

ՇԻՇԵՐ

(Verres pharmaceutique)

Դեղարաններու եւ դեղօրէնի վաճառականներուն համար մասնաւոր շինուած շիշերը մինչեւ հիմա Հրեայ վաճառական մը մօտօք ըրած էր: Այժմ ուրախ ենք յայտարարելու որ տիար Մկրտիչ Պօղոսօֆ (Աչրը Էֆէնտի խան, Թիւ 27 գրասենեակը) ձեռնարկած է այս գործին եւ ունի ճոխ ու այլազան մթերք մը այդ կարգի ամէն կերպ շիշերու եւ կարող է մրցիլ ամէն կերպով: Վստահ եւ ապահով ենք որ թէ՛ Պօլսոյ եւ թէ՛ գաւառի մեր բոլոր Հայ դեղագործները եւ տօկիաքները պիտի փութան իրենց գնումը ընել այս Հայ եւ այս ճիւղին մէջ մէկ էտտիկ առեւտրական տունէն, քաջալերելու համար Հայ ձեռնարկուն որ միւսոյն տունն աժանութիւնը քնարան ընտրած է իրեն:

Ը Ա Ս Ն Ս Գ Է Տ Ա Տ Ա Մ Ն Ա Բ Ո Յ Ժ

ՏՈՒԹՈՒ Մ. ԱՅԱՆԵԱՆ

Վկայեալ Բարիկի համալսարանէն, եւ անձնական ատամնաբոյժ երջանկայիշատակ Մուղաֆէրէտտին Շահին:

Բերա Մեծ Փողոց, ուսանական դեպքանատան դիմաց Սիթէ ալ Սիթի, ուր կը դարձանէ ամէն տեսակ ակուայի, լինտի եւ բերնի հիւանդութիւններ վերջնական ընդունուած մէթոտներով, կեղծ ակուաներ սան քրօչէ է սան բլաք տասը տարի սպանուլով թեամբ:

Սոյն դարձանները կը կատարուին Գաղղիական եւ Ամերիկեան ամենալիքին հնարուած գործիքներով, որով ենթական՝ ամէն տեսակ գործողութիւնները յիտի ընդունի, առանց ցաւի եւ առանց քնացուելու: Դարմանատունը Բարիկեան մասնագիտական վերջին օրադէմով, իր տեսակին մէջ եզական է: Այցելեցէ՛ք եւ գտնեցէ՛ք:



MAYER-ՄԱՆԷՐ

ՂԱԼԱԹԻԱ ԵՒ ՊՈԼԻՍ

ՀԱՆԴԵՐՁԵՆՆԵՐՈՒ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒ

ԶՄԵՌՆԱՅԻՆ ԶԳԵՍՏՆԵՐ

ԿԻՆԵՐՈՒ, ԱՅԻՐԵՐՈՒ ԵՒ ՏՂՈՑ ՀԱՄԱՐ

ԱԺԱՆ ԵՒ ԴԻԻՐԱՄԱՏՁԵԼԻ

ԴԻՄԵՅԼԷ ԵՒ ԳՈՀ ՊԵՏԻ ՄՆԱՔ